

A GOOD  
ADVERTISING  
MEDIUM

# Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի

Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ  
THE CITIZEN

THE ONLY  
ARMENIAN  
PAPER  
Published in  
California.

VOL. I. NO. 14

FRESNO, CAL. SATURDAY, NOV. 15, 1902.

PRICE, 5 CENTS.

ՀԱՄԱՐ Ա. ԹԻԻ 14.

ՖՐԷՆՕ, ԲԱԼ. ՇԱԲԱԹ, ՆՈՅ. 15, 1902

ԳԻՆ 5 ՍԷՆՑ

## ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Ամեն անոնք որ Քաղաքացի կըստանան և երեք շաբաթ շարունակ կը պահեն զայն՝ մեր կողմէն կանոնաւոր բաժանորդ կը նկատուին: Իսկ անոնք որ չեն փափաքիր բաժանորդագրուիլ Շաբաթաթերթիս՝ կը խնդրենք որ հաճին զայն մեզ վերադարձնել անմիջապէս, որպէս զի իրենց անունները չնշենք մեր ցանկէն:

## ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒԻՐԵՐ

Կուսութեամբայէն ահաւոր լուրեր կուզան: Սանթա Բարիա հրաբուխը բռնկած ու մեծ աւերումներ գործած է իր բոլորաբեր կեանքի և ընչից անպատմելի կորուստներ պատճառելով: Սանթա Բարիա քաղաքը հիմնադրուած էր եղած է բոլորովին, ու անոր բնակիչներէն կը կարծուի թէ ոչ մէկ անձ իսկ կրցած է ազատիլ ստակալի և անակնկալ մահուանէ: Փարմար, Սան Ֆիլիփ, Քլեմենտի և Քոթեփի կ քաղաքներն ալ քարուքանդ եղած ու եօթը ոտք մոխիրի և տաք աւազի տակ ծածկուած կը մնան: Այս քաղաքները Սանթա Բարիայի բոլորաբեր ցրուած են՝ 30 մղոնի կիսաշրջանակ տարածութեան մը վրայ՝ 30,000 բնակիչներով:

Հոկ. 25ին Սանթա Բարիա քաղաքի բնակիչներէն ոմանք հեռագրով կը տեղեկագրեն Կուսութեամբայի Նախագահին թէ նոյն օր՝ կէսօրի տեսն թանձր խաւար մը կը պատէ քաղաքը և երկինքէն աւազ տեղալ կըսկսի մեծ քանակութեամբ, և տեղեկութիւն կը խնդրեն նախագահէն այս տարօրինակ պատահարի մասին: Եւ որովհետեւ այս հեռագրէն վերջ ուրիշ ո և է մէկ լուր անուած չէ յիշեալ քաղաքէն՝ կըմտածուի թէ նոյն օր քանդուած ու լուայով ծածկուած ըլլայ այն: Սալվատորի Նա Լիպերթատ քաղաքէն, որ 150 մղոնի չափ հեռի է Սանթա Բարիայէ, լուր կուզայ թէ Հոկ. 25ին՝ երկրաշարժի քանի մը ուժգին ցնցումներէ և ահաւոր պայթումներու ձայներէ վերջ՝ Սանթա Բարիա բռնկած է և անոր գաղաթը, որ 10,000 ոտքի չափ բարձր է ծովի մակերևոյթէն, երկար ժամանակ բոցերու և կրակներու մէջ ծածկուած տեսնուեր է հեռուէն: Աւելի մերձակայ քաղաքէ մը լուր կուտան թէ նոյն օրը՝ պայթումէ վերջ լաւայ սկսած է վազել հրաբուխի բերնէն՝ թանձր մուխերու հետ միասին: Այս լուրերը քով քովի բերելով կը վաւերանայ սա ընդհանուր

կարծիքը թէ ահուելի դէպքը պատահած է Հոկ. 25ին. և թէ 30000 բնակիչներէն մէկը ազատած չերևիր տակաւին՝ ստակալի պատմութիւնը պատմելու համար: Փանամայէն եկող շոգենաւներու նաւապետները կը պատմեն թէ Սանթա Բարիայի առջի պայթումը զգալի և լսելի եղած է մինչեւ ի Հոնոլուլուս որ 200 մղոնի չափ հեռի է կատղած հրաբուխէն:

Կուսութեամբայի փոքր հանրապետութիւնը ոտակալի օրերու մէջ է՝ սով և կարօտութիւն անխուսափելի են: Օգնութիւն կը խնդրուի ամեն կողմէ:

Ֆրանսական Կառավարութիւնը Պատույ Լէգէոնի խաչը շնորհած է ահանաւոր հայ բարերար Ա. Մանթաշեանցի, որ յանձն առած է Փարիզի ամենապատուաւոր փողոցներէ մէկին վրայ հայկական մատուցող Հայկական ճարտարապետութեան նմոյշ մը պիտի ըլլայ՝ Աղթամարի եկեղեցիէն ընդօրինակուած:

Նիւ Եորքի ազգայիններէն Տիգրան Քելեկեան նոյն քաղաքի Պարսկական Հիւպատոս անուանուած է:

Ուաշինկթընէ քաշուած Նոյ. 11 թիւ հեռագիր մը կըսէ թէ Լիոնի (Ֆրանսա) ամերիկեան հիւպատոսը՝ Ճան Ս. Քոփլերթ իր վերջի տեղեկագրին մէջ ըսած է եղբր թէ վերջերս Իսպանոյ մէջ Ֆիլիքսերան 750,000 արտավար այգի աւերած է, և թէ այս մեծ աւերումին անմիջական արդիւնքը պիտի ըլլայ մեծ պահանջ մը Քալիֆորնիան որթատունկերու համար:

Նոյն հեռագիրը կըսէ նաև թէ Ֆիլիքսերան թէև Քալիֆորնիոյ որթերուն ալ կը վնասէ ընդհանրապէս, բայց այդ վնասը առ հասարակ շատ մեծ բան մը չի նկատուիր, զի տունկին վրայ Ֆիլիքսերայի թողուցած վէճը հեղուկով մը կը լեցուի և քիչ ատենէն կը գոցուի եղեր: Այս իրողութիւնը գիտնալով է որ Եւրոպացիք շատ յարգի կը նկատեն եղեր Քալիֆորնիայի խաղողը:

## Մ Ա Հ Ս Գ Ո Ց Ժ

Օրիորդ Աղանի Քէօզէեան, որ երկար ատեն է ի վեր անկողնոյ կը ծառայէր, մահկանացուն կնքեց անցեալ Զորեքարթի օր՝ տասն եւ ութը տարեկան ծաղիկ հասակին մէջ: Հուղարկաւորութեան հանդէսը տեղի ունեցաւ Հինգշաբթի օր՝ Ս. Երրորդութիւն Եկեղեցոյ, իսկ թաղումը՝ ազգային գերեզմանատան մէջ:



Ծ Ա Ղ Կ Ա Ք Ա Ղ

— 0 —

— Առանց բանալիի դուռը գողին համար փորձութիւն մը կրնայ ըլլալ շատ անգամ,

— Գէշ զբոսը մարդս սուսի տէր կընէ, բայց բարի զբոսը զայն իր սուսէն չի գրկէր:

— Մանկութեան սիրուն ժպիտը ծերութեան տղեղ խորշմները կը պատկերացնէ:

— Կրօնքը զգացում մըն է միայն, բայց խղճին վերայ հանդարտեցուցիչ ազդեցութիւն մը ունի:

— Տենչը օդնած է շատերուն բարձրանալ կենաց մէջ, շատերուն ալ խրած է մտապութեան անդունդին մէջ:

— Բարկացող կնկան մը բարկութիւնը հանդարտեցնելու համար մէկ միայն գործնական միջոց կայ— համարեաւոր և արհամարհող լուսթիւն:

— Մարդիկ իրենց հարստութեան վրայ կը պարծենան ընդհանրապէս, բայց լուս կը մնան իրենց աղքատութեան մասին:

— Սպերախտութիւնն ու անձնասիրութիւնը տժգուհութեան երկուստեակ դաւակներն են:

— Կանուխէն ուղղուած սխալ մը կրնայ սպառնալ վտանգաւոր ընթացքի մը առջև թուաբ մը ըլլալ:

— Մաքուի կըսէ թէ աշխարհիս ամենէ մեծ սքանչելիքը, եթէ ներսի է ըսել, զեղեցիկ կիներն է:

— Առանց պահասութեան բարեկամ փնտոյ մարդիկ՝ առանց բարեկամի կը մնան:

\* \* \* \* \*

Վարդապետին մէկը իր կիրակնօրեայ քարոզին մէջ կըսէ ի մէջ այլոց՝ "Ո՛վ Աբրահամ, Աբրահամ, որո՞նք տեղը դնեմ քեզ, եթէ Մովսէսին տեղը դնեմ" չըսար. նախահայր Ադամին աթոռը նստեցնեմ" չի յարմարիր. եթէ Եղիային տեղը նստեցնեմ" չի վայելիր:" Այս կրկնութիւնները բաւական տեսն կը շարունակէ Հայր Սուրբը՝ առանց վերջանորութեան մը հսնելի և առանց Աբրահամին յարմար տեղ մը գտնել կարենալու: Ունկնդիրներէն մէկը՝ ձանձրացած ոտքի կեցնէ և

— Հայր Սուրբ, Հայր Սուրբ, կեցիր, կըսէ, բայց մը ահա ես տեղէս կեցնեմ, և կը խնդրեմ որ իմ տեղս Աբրահամին տաք որ ամենքս ուղ աղատինք:

— 0 —

— (Ժողովի մը մէջ) Կարապետը ոչ միայն ստախօս մ'է ու զրպարախի մը՝ այլ ցածհոգի խառտիկ մ'է. իր վերջի բոլոր ըսածները . . .

Ատենապետը — Ի կարգ. խօսող պարտը պէտք է որ խորհրդարանական օրէնքի համեմատ վարուի, և իր խօսքերը ատենապետին ուղղէ:

Ֆ Ր Է Ջ Ն Օ

ԸՆՏՐՈՒԹԵՅՔԻՆԿ ՓԱՐԼԸՐՍ  
ՇԱՆՆԸՆ և ՊԻԼ, Տէրեր  
1154 ձէյ փողոց, — Ֆրէզնօ. — Թէլէֆօն Մէյն 160

ձ. Մ. Սերոբեան, ձ. Պաննըր, Յ. Մ. Սերոբեան

Սան Ռօքիի Վալի Լուսո Քօ,  
ձ. ՊԱՆՆԸՐ, Վարիչ:

ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԱԼՈՒԱԾ ԵՒ  
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիւ 954 ԱՅ փողոց, Ֆրէզնօ, Բալիֆօրնիա:  
Թէլէֆօն, Մէյն 40

Եթէ կը փափաքիս գնել կամ ծախել մշակուած կամ անմշակ ամեն տեսակ կաշուած՝ եկուր և մեզ տես թէ ինչ տեսակ առաջարկութիւններ կրնանք ներկայացնել քեզ: Ներկայացուցիչներն ենք շատ մը առաջնակարգ ապահովագրական ընկերութեանց, որոց համար ձեր գործերը կը խնդրենք:

Ֆ Ր Է Ջ Ն Օ

ԼԸՄՊԸՐ ԲԸՄԲԸՆԻ

ԳՐԱՍԵՆԵԱԿ ՌԻ ՎԱՃԱՌԱՏԵՂԻՆ  
ԱՅԿՎԵՆՔՈՒԲԱՓՈՂՈՑՆԵՐՈՒ ԱՆԿԻՒՆԸ

Թէլէֆօն — — — Մէյն 24  
ՖՐԷՋՆՕ, ԲԱԼԻՖՕՐՆԻԱ.

Ընտիր կերակուցիչի համար գնա

ՍԻԹԻ ՊԷՅՔԸՐԻՆ

— ձ. Մ. Բօհլըր և Փիքֆօրթ, ճաշարանատարք —  
1138 ԱՅ Ըսթրիթ, Ֆրէզնօ, Բալ.

ԱԶԳ

Նոյ. 27ի Հինգշաբթի երեկոյ ժամը 8ին Ֆ. Հ. Գ. Միութեան ընդհանուր անդամական ժողովը նիստ պիտի ունենայ Միութեան սեփական սրահին մէջ: Կը խնդրուի բոլոր անդամներէն ներկայ գտնուիլ այս կարևոր ժողովին: Ի դիմաց Ֆ. Հ. Գ. Մ. Ընդհ. ժող. Մ. Ալեմեան, Ատենապետ

ԳՐԻԳՈՐ Կ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

ԳՈՐԾԱԿԱԼ  
ԿԵԱՆՔԻ ԵՒ ԿՐԱԿԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

Կապահովագրէ մէկէ մինչև եօթանասուն տարեկան պնձինք՝ առանց սեռի խտրութեան:

ՊԱՇՏՕՆԱՏԵՂԻ | Ֆրէզնօ Լօն Էնտ Մէյվինկ Պէնք  
Պիլտինկ. Սենեակ, Թիւ 14 և 15  
Փօսթ Օֆիս Պաքս, 1285 | ՖՐԷՋՆՕ, ԲԱԼԻ.  
Թէլէֆօն, պիւ 272

Ք Ա Ղ Ա Ք Ա Յ Ի

ՇԱՔԱԹԱԹԵՐԹ

Կը հրատարակուի ամեն Շաբաթ օրեր ի թիւ 1033

ՃէՅ Փողոց, Էքսփրեսիթըրի Շէնքին մէջ:

Հ. ԷԿԻՆԵԱՆ, ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՏ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Միացեալ Նահանգներու և Քանադայի Համար Տարեկան մէկ ու կէս Տր. — Վեցամսեայ 75 Սէնթ Ուրիշ երկիրներու Համար

Տարեկան 10 Տրանգ — — Վեցամսեայ 5 Տրանգ Բաժանորդագիրը Կանխիկ Վճարելի է միշտ

Նամակ, ծրար կամ դրամ կը զրկուին խմբագրութեան հետեւեալ հասցէի:

To The Editor of

THE CITIZEN

P. O. Box 1224

Fresno, Cal.

THE CITIZEN

The Only Armenian Paper Published Weekly in the State of California.

H. EGUINIAN, Editor and Manager

OFFICE, 1033 J STREET FRESNO, CAL.

SUBSCRIPTION RATES (Payable in Advance)

One Year..... \$1 50 | Six Months.....75 Cents

ՅՐԷՁՆՕ, ՔԱԼԻՖՕՐՆԻԱ. ՆՈՅ. 15, 1902

ԻՆՉՈՒ ԿԱՏԵՆ ՄԵՁ

—0—

Անշան բացառութիւնները մէկդի թողլով՝ վստահարար կրնանք ըսել թէ ընդհանրապէս Ամերիկացիք կատեն մեզ: Մայրցամաքներէ մը չէ բնաւ ըսել թէ մեզ քիչ մը համակրողներուն իսկ մեծ մասը —եթէ ոչ ամենը— մեզ չեն սիրեր այնչափ՝ որչափ կակընկալենք և կը կարծենք սիրուած ու յարգուած ըլլալ անոնցմէ:

Ի հարկէ մենք չենք կրնար ակնկալել ամերիկացիին սրտագին սէրն ու համակրանքը. և կամ թէ իրաւունք չունինք պահանջել անոնցմէ որ սիրեն մեզ այն չափով ինչ չափով որ կը սիրեն ու կը յարգեն զիրար: Բընական որ չէ օտարական մը՝ բոլորովին տարբեր խառնուածք, տարբեր կրթութիւն, տարբեր բարք, տարբեր լեզու, սովորութիւն, նիստ ու կաց և վերջապէս կեանքի առօրեայ բոլոր երևոյթներուն մէջ տարբեր ձև ու ընթացք ունեցող ասիական ժողովուրդ մը կարողանայ սիրուիլ ու յարգուիլ տեղացիի մը նման: Այդ բանը չենք կրնար ակնկալել, և ակնկալելն ալ միամտութիւն մը կը նկատենք: Սակայն մեր վայելած յարգանքը, ցաւալի է նշանակել թէ շատ վար է այն աստիճանէն որուն հասած ըլլալու էինք արդէն:

Կան սակայն մեր մէջ շատ միամիտներ որոնք ամերիկացիի մը քաղցր ժպիտին մէջ տարօրինակ համակրանք մը տեսնան. և արդարեւ բարեկիրթ ամերիկացիին՝ երես առ երես խօսած ժամանակ՝ ընդհանրապէս հակակրութիւն մը զգալի չընէր իւր խօսակցին, այլ

ընդհակառակն՝ տարօրինակ համակրանք մը կը նըշմարուի անոր քաղաքավար խօսակցութեանց մէջ որք կը շայնեն ընդհանրապէս մեր այն դասակարգը որ տեղական բարքերը իմաստասիրած չէ մօտէն:

Վերջի քաղաքական ընտրութիւններէ առաջ՝ մեր ժողովներուն մէջ խօսող ամերիկացի ատենախօսներէ շատեր փորձով ապացուցին թէ մեր վերեւ ըսածները իրողութիւններ են: Առնք, կը յիշուի անշուշտ թէ զմայրեցան հայ ժողովրդին վրայ. մեզ Ֆրէզնոյի պարծանքը նկատեցին. և իրենց համար մեծ պատիւ մը համարեցին՝ մեզի նման ուշիմ, բարեկիրթ, մեղուաջան ու վերին աստիճանի սիրելի ժողովրդի մը խօսելու պատեհութիւնը ունեցած ըլլալուն համար:

Այսպիսի գովեստներ որք զուրկ են խորունկ նշանակութիւն ունենալէ, կը թուի թէ շատ քաղցր սպաւորութիւն կը թողուն մերայնոց վրայ, անանկ որ շատեր կը մտածեն թէ ունինք այն ամեն առաւելութիւններն որոց դրուատականները հորդահօս կը հօտին ատենախօսներու բերնէն: Գուցէ այսօրինակ գովեստները են որ երբեմն կը մոռցունեն մեզ մեր այն պակասութիւններն որք մեզ հակակրելի ըրած են տեղական ժողովրդին առջև՝ թէ՛ հօս և թէ՛ ուրիշ տեղեր:

Չենք կրնար սակայն ուրանալ թէ այս ատենախօսներուն ինչպէս նաև ընդհանուր ժողովրդի մէջ կան շատեր որք արդարեւ կը սիրեն մեզ՝ բառին թեթև նշանակութեամբ, բայց մտնալու չենք թէ այդ սէրը շատ սահմանափակ է, ու ժողովարարներու և առևտրական շրջանակներէ անդին շատ չանցնիր:

Առուտուրի մէջ երբ մանաւանդ մեծ շահ մը կակնկալէ օտարազգին, ուշադրութենէ չի կրնար վրիպիլ անոր ցոյց տուած համակրանքը զէպի Հայն ու անոր սղգութիւնը՝ հոգ չէ եթէ այս վերջինս նորեկ և կամ անտաշ մէկն եղած ըլլայ: Նա կը շոյէ Հայուն ունայնասիրութիւնը. խոշորացոյցով կը նայի ու կը զմայլի անոր վարպետութեան և մեծ փորձառութեան վրայ՝ մինչև որ գործը լինայ ու կունակը դարձնէ յաճախորդին...:

Այսպէս չէ՞ եղած ամեն առևտրական և ուրիշ յարաբերութեանց մէջ: Քիչ մը հեռուն տեսնողները իրենց ուշադրութենէն չեն կրնար վրիպած ըլլալ այս ակներև ճշմարտութիւնը: Երբ ընտրութեանց օրերը կը մօտենան՝ հայ քաղաքացին կը շրջապատուի ամեն կողմէ: Կը մտերմանան, կը շոյին ու կը վերագրեն մեզ ինչ որ թէ՛ մենք գիտենք և թէ՛ իրենք կը հաւտան թէ չունինք ընդհանրապէս: Թէ ինչ կը պատահի ընտրութենէ վերջ, կամ ինչպէս կը վարուին մեզի հետ՝ աւելորդ է նկարագրել: Եւ մտալու չենք վայրկեան մ'անգամ թէ այդ մեղրենի խօսքեր ժամանակաւոր են, ու սրտէ չեն բղխիր:

Արդ՝ սխալ մը չի պիտի ըլլայ եթէ սա եզրակացութեան հասնինք թէ երբ Ամերիկացիք մեզ համակրել կը ձևացնեն՝ ընդհանրապէս շահէ մը մղուած ըլլալու են. և կամ թէ կը "սիրեն" մեզ ու կարգադատին մեր վրայ՝ մեր տգիտութեան, աղքատութեան ու հարստահարեալ ազգ մը եղած ըլլալուն համար:

Եւ այդ տեսակ "սէր" կամ յարգանք չէ որ կը պահանջենք կամ կակնկալենք վայելելու:

Բացառութիւններ, ինչպէս որ ըսինք քիչ մը առաջ, շատ աննշան ըլլալով մեր ուշադրութիւնը գրաւելու չեն այս պարագային մէջ: Ինչ նշանակութիւն ունի եթէ հազարաւոր Հայերէ բանի մը անհատներ իրենց վարքով, բարքով և պատուարեր ընթացքով ոմանց ամբարիկացուց սրտին մէջ սեղ գտած ըլլան: Այս անհատական բացառութիւնները բաժին չունին մեր յօդուածին մէջ որոյ նպատակն է ընդհանուրը քրքրել ու պարզել ընթերցողին առջև:

Միացեալ նահանգաց մէջ՝ գաղտնի ընկերութիւնները երկրի բարոյական, ընկերական ու ընտանեկան զարգացման զարկ առուող գորութիւններէ մին նկատուած են: Չի կայ քաղաք մը կամ գիւղ մը ուր այս օրինակ քանի մը կազմակերպութիւններ իրենց ճիւղերը չունենան: Ֆրէզնօն ո՛չ միայն բացառութիւն մը չէ այս մասին, այլ և բազմաւոր է շատերէն, վասնզի չի կայ նշանակութիւն ունեցող գաղտնի ընկերութիւն մը, և շատ մը երկրորդականներ ալ, որոնք իրենց օթեակներ չունենան այս բուռ մը ժողովրդեան մէջ, ուր զժողովրդաւ կը գտնես մէկը որ քանի մը ընկերութիւններու վերաբերած չի լինի, անանկ որ հոս ժողովրդի բանմաց մասը այլ և այլ կերպերով շաղախուած ու միացած է իրարու: Սակայն այս ընկերութիւններու և ոչ մէկին մէջ Հայք կրցած են և կրնան մուտ գտնել այսօր: Հրեայն, Սլաւը, Ֆրստացին, Իտալացին, և ուրիշ ամեն ազգեր կրցած են ընդունուիլ անոնց մէջ, բայց հայը, ո՛չ: Եւ ո՛վ չէ զգացած մեզմէ այն գառն տպաւորութիւնը թէ հայ ըլլալը նախատինք մէ նկատուած է ընդհանրապէս: "Օ՛, Հի իզ էն Արմինիւն" բացատրութիւնը շատերու լեզուին ծայրն է. մի քիչ խորը տեսնողները՝ առանց զայն խակ լսած ըլլալու՝ զգացած ու խնայած միշտ:

Եւ ի՞նչու այս հակակրութիւնը և խուլ ատելութիւնը հայ տարրին դէմ: Պատասխանը շատ բարդ է այս հարցման, և զայն մատնանիշ ընելու համար քանի մը հարեանցի խօսքեր բաւական չեն անշուշտ: Սակայն զայն մատնանիշ ընելէ առաջ՝ ջանանք նախ այլոց կարծիքը մէջ բերել՝ այս մասին մեր ըսելիքները աւելի զիւրին կերպով հաստատել կարենալու համար:

Ոմանք կը կարծեն թէ հայ տարրը՝ մայր հայրենեաց կապուած ու յեղափոխական գործերու ձեռնամուխ ըլլալուն համար է որ չի սիրուիր տեղացիներէն: Այս կարծիք բողոքովին հեռի չէ ճշմարտութիւն մը ըլլալէ: Իրաւ է որ կայ նեղ միտք ունեցող՝ կոյր հայրենասէր դասակարգ մը ամերիկացուց մէջ որ չի սիրեր մեզ՝ հոս ձուլուիլ ու մեր հայրենիքը ուրանալ չի ձգտել: Նուս համար: Բայց այս դասակարգը չէ որ ժողովրդի մեծ մասը կը կազմէ. և անոնց հակակրութիւնը նշանակութիւն պիտի չունենար՝ եթէ ընդհանուր ժողովրդին սէրը գրաւելու յաջողութիւնը ունեցած ըլլայինք: Լայն միտք, ազատաստիճ և իր կոչման արժանի Ամերիկացին ոչ միայն չի պիտի ատէր, այլ աւելի պիտի սիրէր զմեզ՝ մեր հարստահարուած ու բռնութեանց տակ ընկճեալ Հայրենիքը ազատել ջանալնուս համար: Ո՛չ ապաքէն ազատասիրութիւնը ամերիկեան այս մեծ

հանրապետութեան ազգային ամենամեծ հանգանակն է եղած անոր ազատութեան օրէն ի վեր: Պատիւ մը քիտի սեպէլինք մեր ազգին՝ եթէ մարդիկ ատէին Հայը աւ պատճառի համար միայն:

Կըսեն ոմանք ալ թէ մեր բունած նիւթական դիրքն է որ տեղացույն նախանձը շարժած ու անոր պոռկութիւնը զրգուած է հայութեան դէմ: Այս կարծիք աւելի շատ հետևողներ ունի մեր մէջ, վասնզի մեր ունայնասիրութիւնը շոյելու բնութիւն ունեցող դադարաւոր մ'է ինքնին: Կը գտնուին անշուշտ մարդիկ որք կատեն մեզ մեր յաջողութեան համար. բայց շատ աննշան են անոնք, և չեն կրնար ընդհանուր հակակրանք մը յառաջ բերել ժողովրդի մէջ: Եթէ սա ըլլար պատճառ մեր դէմ եղած հակակրութեան՝ մեր քոյր գաղթականութիւններէ շատեր Ամերիկացուց սրտի հատորը պիտի ըլլային: Մնաց որ մեր գաղթականութեան բունած դիրքը, որ մեծ բան մը կրնայ երեցած ըլլալ մեր աչքին, ընդհանուր նախանձ գրգռելու չափ նշանակութիւն չունի երբէք: Եթէ Ամերիկացիք այսպիսի պատճառի մը համար ազգ մը կամ տարրեր ժողովուրդ մը ատելու պղտիկութիւնը ունենային՝ Հրէից դէմ խաչակրութիւն մը սկսած ըլլալու էր Ֆրէզնոյի մէջ շատ ժամանակ տուալ:

ՀԱՒԿԻԹՈՒ ՀԱՒԷՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԿԵՐՊՈՎ

ՏՔԹ. Բիւզանդ Նշիկեան հաւի համար կուտ մը հընարած ու ի վաճառ հանած է ծամանակէ մը ի վեր: Այս նոր կուտը, որ ոչ միայն հաւերը կը վերցնէ՝ այլ և հաւկիթ ամել կուտայ անոնց, կը գործածուի այժմ թէ Միացեալ Նահանգներուն ամեն կողմերը, և թէ Քալիֆորնիայի և Անգլիոյ մէջ, ուր մեծ ընդունելութիւն գըտած է: Մանրակրկիտ քննութեամբ հաստատուած է թէ մէկ սէնթի այս նորահնար կուտով՝ չորս սէնթ աւելի արդիւնք կարելի է ձեռք բերել՝ մանաւանդ այս եղանակին երբ երկուսասանեակ մը հաւկիթը դիւրին է ծախել 25 սէնթի: Կարծէ փորձել այս կուտէն, որ կը ծախուի քաղաքիս մէջ՝ Քրթնըր և Կրաֆթ վաճառատուններու մէջ. անոր անունն է Միտլենտ փօթթրի Ֆիտ: Գիտնալու է թէ հասարակ ցորենի գնէն շատ տարբերութիւն չունի այս հատիկին գինը: Շատ փորձած ու գոհ մնացած են անկէ ամէն կերպով: Շատ վկայութիւններ տրուած են այս մասին: Այս վկայութեանց մէկ բովանդակութիւնը պիտի հրատարակուի քիչ ատենէն առանձին հաստորով: Գնելէ առաջ յիշելու է թէ այս հատիկներուն տարբեր տեսակները կան: Գնած ժամանակ ըսելու է թէ ձեր ուղածը հաւ դիրցնելու պիտի ծառայէ՝ թէ հաւկիթ ամել տարու համար: Անունը չը մոռնաք:

Վարձու երկիր  
—0—

Երեսուն արտավար առաջնակարգ այդի մը կայ վարձու: Մանրամասնութեանց համար դիմել խմբագրատունս:

ՄԱՆՈՒՅՈՒՄ ՉԱՄԻՉԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՅԳԵՊԱՆՆԵՐՈՒՆ

Ընկերութեան պատկանող այգեպանները հետևեալ կանխավճարները պիտի ստանան.

Իմփերել քլոսթըր,	փաւնտին	5	սէնթ
Տիհէշա քլոսթըր	"	5	սէնթ
Ֆէնսի քլոսթըր	"	5	սէնթ
3 քրաւն Լընտըն լէյըր	"	4	սէնթ
2 քրաւն Լընտըն լէյըր	"	4	սէնթ
4 քրաւն ըսթանտըրտ	"	3 և կէս սէնթ	
3 քրաւն ըսթանտըրտ	"	3	սէնթ
2 քրաւն ըսթանտըրտ	"	2 և կէս սէնթ	
Սիպէս մսքթ. ըսթնտրո	"	2 և կէս սէնթ	
Սիպէս սըլթանաս	"	2 և երեք չորրորդ սթ.	

Քալիֆ. Ռէյդին Կրօււրը Առօսիէչըն Ա. Լ. Սէնթըր, Ասինադպիր

Իր աչքերէն կրակ ցայտեն.  
Այտերն կարմիր իբրև վարդ.  
Աշուամազով պատած ծնօտ.  
Սև դանդուրներ՝ զէմքին զարդ:

Երբ նա անցնի՝ հէզ ազլ իկներ  
Յ'Ապուշ կրթին ու կենան.  
Անոր զեղոյն վառին սիրով,  
Չմայլին ու արբենան:

Դու կերազես որ քու չքնաղ  
Երևատարդն խտիւլ՝  
Գերի ըլլայ սիրոյդ համար,  
Անձը զոհէ, մեռնի ալ:

Եւ երբեմն զայն սուտ մերծես  
Նազանքներովդ յանցաւոր.  
Չայն չարչարես՝ որ քու առջև  
Հալի, մաշի ամեն օր:

Դու կերազես որ ամեն մարդ  
Երանի տայ քու անձին.  
Ընկերներդ բաղդիդ համար  
Այրին, տապին, նախանձին:

Եւ վերջապէս օ, մը հաճիս  
Բազդդ, ձեռքդ տալ անոր,  
Խեղճին վրայ իշխան դառնալ՝  
Թագուհի մը բռնաւոր:

Կը նախընտրես նա հայ չըլլայ.  
"Ո՛հ, Հայերը անկիրթ են".  
Կը փափաքիս որ օտարներ  
Սիրտդ գերեն՝ կախարդեն:

Բայց, սիրելիս, մի սպասեր  
Ի զուր տեղը այդ անձին,  
Երազները իրական չեն,  
Անոնք կու գան ու կ'անցնին:

Հայու աղջիկ, անփորձ աղջիկ,  
Ի զուր տեղը կըսպասես.  
Վաղդ սյտերդ, տես, խամբած են,  
Սիրտդ քու մէջ կը մաշես:

Երբ տարիքդ երսունն անցնի՝  
Ճերմակն իննայ մաղիդ մէջ.  
Պիտի դգաս մեծ սխաղդ,  
Պիտ՝ լաս անշուշտ անկէ վերջ:

Քանի որ դեռ ուշ չէ արդէն  
Ընտրէ՛ սերդ, մ'ուզէ՛ր զոհ,  
Իտիադը թող նա ըլլայ.  
Չանայ իրով ըլլալ զոհ:

ՍԱՆԹԱ ՖԻ

\*\* ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐՈՒ ԼԱՒԱԳՈՅՆ ԳԻԾԸ \*\*  
Ճամբորդին համար ամեն հանդիստ և զիւրութիւն

Սանթա Ֆի երկաթուղեաց ճամբան լաւագոյնը, կարծ  
ու ամենէ արագն է՝ արևելք երթալու կամ արևեւոտ  
հաս գալու համար:

Ուղղակի շողենաւային և երկաթ-  
թուղի տոմսեր Հին Աշխարհի  
ամեն կազմերուն և անէն կազմե-  
րէն գալու համար: Տոմսի գրամ-  
ները կրնան հաս վճարուիլ. եթէ  
տոմսերը չի գոծած ուին՝ զրամը



ես կը սրուի: Սան Ֆրանսիսկօ երթալու լաւագոյն  
ճամբան է այս: Տեղեկութիւններ սիրով կը սրունին  
թէ՛ կայարանը և թէ քաղաքիս գրասենեակը՝ ի թիւ  
1031 ձէյ փողոց, Ֆրէչնօ: Թ. Ա. ՃՕՆՍ, Գրծկ.

Ս Ա Ն Թ Ա Ֆ Ի  
Երկաթուղեաց Ընկերութիւն

ԱՄԵՐԻԿԱՆԱՅ ԱՂԶԿԱՆ ԵՐԱԶԸ

— 0 —

Հպարտ աղջիկ, Հայու աղջիկ,  
Որուն համար կըսպասես.  
Վարդ երեսներդ ա՛լ կը խամբին.  
Կեանքդ ի զուր կը մաշես:

Դու կերազես քաջ կտրիճ մը՝  
Տարիք քսան, քսան հինգ՝  
Հասակն երկայն, գեմք վայելուչ,  
Կրթեալ, զիտուն ըլլայ ինք:

Դու կերազես որ փնտաւո՞ղ  
Գործ մ'ունենայ շահարեր,  
Առատ ստակ, տուն ու կալուած,  
Բարձր դիրք մ'ալ պատուարեր:

# GEORGE BROS.

ՀԱՂՈՒՍՏՆԵՐՈՒ, ԳԼԽԱՐԿԻ ԵՒ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ  
ՃԵՐՄԱԿԵՂԷՆԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ ԵՒ  
ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԵՐՉԱԿՆԵՐ.

1109 ձէՑ Փողոց, — Ֆիւք Պլաք — Ֆրէզնօ.

Թէլէֆօն — — — Ուայթ 711

Հասարակութիւնը վաղուց ի վեր փորձով գիտէ ար-  
դէն թէ այս խանութին մէջ ծախուած ամէն սպորանք  
իրենց տեսակներուն մէջ լաւագոյններն են, բայց շատ  
քիչեր գիտեն թէ իրենց գիները՝ բազմաաւարտ ու-  
րիչներէ բնաւ տարբերութիւն չունին:

Կը փափաքինք որ անգամ մը փորձէք և վստահու-  
ցնէք զուք զձեզ այս կարեւոր կէտին համար. անկէ  
յետոյ ուրիշ տեղ չէք երթար գնել ինչ որ կարելի է  
ստանալ ձՕՐՃ ԵՂՐԱՅՐՆԵՐԼԷՆ:

## ԹՐԷՅ ԹՈՒՂԹԻ

### ԿԱՄ ԹՈՒՂԹ ԹՐԷՅԻ

ՀԱՄԱՐ ԳՆԱ

## Sorushy Pashlyanin Laki.

Ֆրէզնօ և ԱՅ Փողոցներու անկիւնը

## ԿԸԾԱԽՈՒԻ

Հարիւր վաթսուն էյքերոց առաջնակարգ այգեստան  
մը որուն կէտը այգի է, իսկ միւս կէտը զեղձենի: Տուն,  
ախտ, կառքեր, ամեն տեսակ գործիներ, թրէյդ, սըն-  
տակներ, ձիեր են. Մանրամասնութեանց համար զը-  
րել կամ գիտել խօրազրուութեանս:

## DR. GAZARIAN DENTIST

### Տրք. Յ. Հազարեան,

ԱՏԱՄՆ ԱԳՈՐԾ ԵՒ ԱՏԱՄՆ ԱԲՈՅԺ

Չանս Պլաք, ԱՅ Ըսթրիթ, Ֆրէզնօ, Քալ.

Գոհացուցիչ և առաջնակարգ գոյծ: Կատարեալ զո-  
հացում Յաճախորդներուն: Գիները միշտ չափաւոր:

Թէլէֆօն — — — — — Ուայթ 231

Կուզենք որ ձեր գնելիք պատի թողթերը, ներկ ու  
պատկերի շրջանակները մեզմէ ծախու առնէք: Գնելու  
հետ ընարութեան իրաւունք: Պատի թուղթեր կը փակ-  
ցունենք, ու կը ներկինք:

Supolin և Տրք, 1153-1155 Ա. Փողոց,  
Էվենճըրի կեցը:

## ԱՌՈՂՉԱՊԱՀԱԿԱՆ

— 0 —

Նախարան — Գիտութիւն և գաղտնիք — Հիւանդանոցի  
մասին — Հիւանդութեանց ծագումը — Չանսք արդի-  
ւելու եղանակները — Գարմաններ:

— 0 —

Երբ արեգի լուսոյ շողերը մութ հորիզոնը կը պատ-  
ռեն՝ կրտեք թէ այգն է որ կը ծագի. երբ աղամանդի  
նման ցօղի հատիկները կըսկսին վարդի թուփերէն յամ-  
բարար օդին մէջ ցնդիլ, ու մեղմ հովիկը՝ ստիակին  
դայտայիկը և ծաղկանց անուշահոտութիւնը մթնոլոր-  
տէն քաղելով մեզ կը բերէ՝ ահա օրն է որ կը բացուի:  
Օրին պայծառութեան ու փառաւորութեան մէջ երբ  
աչքերն իս շուրջ կամեմք՝ բնութեան սքանչելի տեսա-  
րանները տարածուած կը տեսնենք առջևնիս, ու վայ-  
րիկ մը՝ այդ հմայիչ սպիտակութեան ներքև՝ բանաս-  
տեղծի թրթռուն քնարը թոյլ և տկար կը թուի այս  
փեմ երեւոյթին հանդէպ: Բայց սակայն բնութիւնը  
չէ որ պիտի երգեմ քեզ, ով սիրելի ընթերցող. ոչ ալ  
նորա Արարչին գործերէն պիտի ճառեմ: Չոր ու ան-  
համ նիւթի մը պիտի պատրաստեմ մտքիդ փափուկ  
թելերը, որ կարենան գինուիլ և կեանքի պայքարին  
մէջ զօրաւոր և առողջ զգալ: Ուստի թող պլպուլն եր-  
գէ մացաներուն մէջ միայնակ, իսկ զու երբ արօրի  
մածին կսթնած՝ հողը կը հերկես՝ բոսպէ մը թող ա-  
կանջներդ ինձ լսեն:

\* \* \* \* \*

Մարդս իր հանճարին թօրգելով գիտութիւն և ան-  
սահման երևակայութիւն՝ զեռ անկարող կը թուի թա-  
փանցելու բնութեան անթիւ գաղտնիքներուն որք գամ  
քան զգամ ի յոյս կը բերուին պատահմամբ՝ մեծ վար-  
պետներու փորձերէն: Մարդուս կեանքը շատ կարճ է  
Աստուծոյ խորհրդաւոր և նուրբ գործերը քրքրելու և  
լուսարանելու, և մեր 50 կամ 60 տարիներուն մէջ  
դիպած իմաստութիւնն և գիտութիւնը շատ քիչ ու ոչ-  
ինչ են: Ապրելու, յաղթելու և յաջողելու կուսին մէջ  
կարելի չէ մեր նպատակին հասնիլ՝ եթէ զինուորի մը  
նման նախապէս պատրաստուած չինք սոյն կենաց պայ-  
քարին համար: Մեր միտք մարդելու և կրթելու ենք,  
մեր կապմ կազմութիւն ենք՝ զիմանալու և դարմա-  
նելու այն տարբեր հիւանդութիւններ և ախտեր որք մեր  
մէկ չսպասած ժամուն՝ մեր կամ մեր սիրելոյն վրայ  
մահուան սև քօղը կը տարածեն: Գառն է երևակայել  
այն սրտաբեկ տեսարանները որոնք մեր ամենուս ալ  
մտքին մէջ թողուցած են իրենց խոր հետքերը՝ այս-  
ինչ կամ այնինչ սիրելոյ մահուամբ: Բայց մահը  
պէտք չէ որ մեզ ստիկում պատճառէ, զինա ծննդեան  
մը վերջաւորութիւնն է. մեր կենաց արմատն է այն,  
ուր ծնունդը կը յանգի և վերածնութիւնը իր բողբոջը  
կառնու յաւիտենական կենաց համար: Արդ՝ մահը չէ,  
այլ անոր անակնկալութիւնը և երբեմն անոր թողու-  
ցած մեծ խրամը որ վայրիկ մը մեզ յուսահատութեան  
և երբեմն թշուառութեան կը մատնէ: Կը բեկտնէ  
բողբոջող կեանքի մը թելը. և շատ անգամ փեմ  
գործ մ'է որ կէս կը մնայ, հանճար մ'է որ կը մարի,

առաջնորդ մ'է որ կը կորսուի, կամ հնարիչ մը՝ որ կը պակսի: Բայց ի՞նչու աչքերնիս խուփ պահենք դեռ՝ զիտութեան լուսոյ առջեւ, ու չը սորվինք պաշտպանել զմեզ այն աւերիչ հիւանդութեանց զէմ որոց վըրայ գիտութիւնը՝ մեծ զոհերէ ու զոհողութիւններէ վերջ՝ կրցած է յաղթող հանդիսանալ:

\* \* \* \* \*

Այս տողեր ինձ յիշեցնել կուտան մեծ պակաս մը որ Ֆրէզնոյի հայ գաղութը ունի: Ամեն երկիրներու մէջ՝ ըստ Ամերիկայ, ըստ Պահիթի, Պոլիս կամ այլուր՝ ամեն օտար գաղթականութիւն իր ոյժ ու հանձար չէ խնայած կատարելու գործերու ամենավեճին, կանգնելու կոթողներու ամենափառասուրբ՝ իր հիւանդանոցը, ուր ամեն ժամ և ամեն օր իւր անդամներէ մին կը կարօտի խնամուելու:

Ֆրէզնոն իր անգուգական զիրքով և պարագաներու բերմամբ հայ գաղթականութեան աստղը ըստ կը խոստանայ. կարճ ժամանակի մէջ հայ հարուստն ու հայ մշակը, արհեստաւորն ու վաճառականը իրենց աչքերը դէպ հոն պիտի դարձունեն, ու զարմանալի չէ որ հայ հիւանդն ալ՝ իրր վերջի յոյս՝ հոն փնտռէ իւր հիւծեալ մարմնոյ սպիղանին: Այսօր Ֆրէզնոյի Հայն բարոյական մեծ պարտականութեան մը տակն է որ կը ճնշուի. եւ թէեւ իր սկար ուսեր արդէն ծանրաբեռնեալ են զանազան հոգերով ու պարագերով՝ կարժէ սակայն այս լուծերու ամենաքաղցրն ու վեճմը տանիլ քաջարար, ու միջոցներ ստեղծել մեղմացնելու եւ ամոքելու աղքատ հիւանդին ու մտշած հայ գաւկին վերջի մի քանի վայրկեանները:

Իմ ի Ֆրէզնո ըրած վերջի այցիս՝ վերածնութեան կոյժ մը, յառաջգիմութեան սգի մը և կաղմակերպութեան ոյժ մը տեսայ հայ գաղթականութեան մէջ: Թող ամեն հայ իր ոյժէն մի փոքր մասնիկ ստատրէ այս օգտակար ձեռնարկն յառաջ մղելու. և պիտի տեսնուի որ քիչ ատենուայ մէջ տարբեր անուն, զիրք և ազդեցութիւն ունի Ֆրէզնոյի Հայութիւնը: Այո՛, հասկառական ու նախանձի հոգիւր ամեն տեղ ալ կը փչեն, ու փուշը ամեն վարդի սեպհականութիւնն է, բայց պէտք չէ որ մեր քայլեր կասեցունենք այդ կարգի հոգիւրուն զէմ, և ոչ ալ ձեռքերնիս պահենք վարդէն՝ անոր փուշին համար: Հսկայաբոյլ յառաջգիմող աշխարհի մը արագ հոսանքին մէջ է որ կընթանամք. իզուր է հակառակ կողմն լողալ աշխատիլ: Մեր ոյժերը չսպառենք, այլ միտցնել ջանանք:

Ֆրէզնոն օր քան զօր կ'աճի ու կը զօրանայ. հայն ալ այս անձան և զօրութեան մէջ իւր յատուկ բաժինը ունի: Մեր՝ Ֆրէզնոյի հայը այս զօրութեան արգասիքն ո՛չ միայն իր անձնական գործոյ՝ այլ հասարակաց օգտակար բարի ձեռնարկներու ալ պէտք է յատկացունէ, և յայնժամ իւր ապագայ սերունդը՝ իր նախնեաց անունովը հպարտ և գոհունակ՝ զգայուն աչքերով պիտի զիտէ հեռին՝ այն փառասուրբ և հոյակապ մեծ շէնքը որոյ ճակատին վրայ սակի տառերով "Տէր Արմինիւն Հօսիթիւր Էնտ Սանիթիերիւմ" գրուած է:

(Շարունակելի) ՏՔԹ. 10ՆԿ

**ՃԻՆԹՐՈԹ - ՊՕՐՏՐՈ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ**  
 1815, 1821 ԹՈՒԼԱՐԻ ԸՍԹՐԻԹ  
 Մեծաքանակ վաճառականք Նախայի, Սընօմայի ևն.  
 գինիներու, տեղական և ներածեալ օղիներու:  
**ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՑԻՉ ԷՑՃԷՆԹՆԵՐ**  
 Բիւսթիլի մագազով դեղ ճանչցուած ՈՒԻԹՐՆԵ  
 ՍԷՏԻՍԻՆԼ ջուրերուն: — Թէլէֆօն, Ուայթ 817:—

**Քասրի Եղբայրներ**  
 Կը ծանուցանեն թէ այս տարի ևս կակնկալեն ընդունիլ Հայ այգեպաններու արտադրած պտուղներն և՛ կը վստահացնեն թէ ամէն յաճախորդ գոհ պիտի մնայ այս ծանօթ տունէն:

**J. K. ELLEZIAN**  
 Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն  
 Նպարեղէններու, պտուղի, սիկարի, ծխախոտի, թէյի, սուրճի, պէյքինկ փափաղրի, ձիթախղի ևն.  
 1145 ԱՅ փողոց — Ֆրէզնո — Թէլէֆօն Պլաք 773

**Պարթոք Ըսրէյալլա,**  
 Էլ և Ֆրէզնո փողոցներ, Պարտիզին դիմացը  
 Թէլէֆօն, մէյն 174 — — — — — Ֆրէզնո  
 վարձու կառքեր. ճամբորդներու ձիերուն հոգատար  
 լուծիւն: Գնել և ծախել: Բոլոր դիշերը բաց ենք:

**ԳՆԱ ԱՌ**  
**ՊԱՐՐԷԹ ՀԻՔՍ ԸՆԿ.**  
 ՎԱՌԱՐԱՆՆԵՐՈՒ, ՊՈՂՊԱՏԵՍՅ ԲՍՆՁԵՐՈՒ,  
 ՆԵՐԿԻ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԵՐԿԱԹԵՂԷՆ**  
 1035-1041 ԱՅ ՓՈՂՈՑ ԹԷԼԷՖՈՆ  
 ՖՐԷՉՆՕ, ՔԱԼ ԷՔՐԷՆԷ — ԹԻ 2

Ձեր Ապահովագրութեան համար դիմեցէք **առ Պ. Յ. Շեփհրրտ և ը Ընկ.**  
 1123 ձէՑ Ըսթրիթ  
 Պահանջները փութով կը վճարուին: Յաճախորդք միշտ գոհացում կատանան:

ՁԵՐ ԱՏԱԽՁՆԵՐԸ ԳՆԵՑԷՔ  
**Ս. Ա. ՓԻՐՄ**  
 ԱՏԱԽՁԻ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԷՆ: ՓՐԷՉՆՕ ՔԱԼ.

**Տրք. Յ. Հ. Բարսեղեան**  
 ՖՐԷՉՆՕ ԼՕՆ ԷՆՏ ՍԷՅՎԻՆԿՍ ՊԱՆՔ ՊԻԼՏԻՆԿ  
 Սենեակ 16 17, Թէլէֆօն Պլու 492. Ֆրէզնո Քալ.